

ԵՐԱԺԾՏԱԿԱՆ

ԵՐԱԺԾՏՈՒԹԵԱՆ ՔԱՐԱԿԵՐՏ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԵՐԸ

Հայաստանն ամբողջութեամբ պատուած է քարակերտ զանազան յուշարձաննեռով՝ ի թիւս հոյակերտ խաչքարերի եւ տապանաքարերի։ Խրաքանչիւր խաչքար կամ տապանաքար ունի իր ստեղծման պատմութիւնը, շարժառիթը, բժշկման, սահմանների պաշտպանութեան, պատմական փաստերի վաւերացման, փրկչագործութեան եւ վերջապէս՝ որպէս մահարձան։ Հայ մատենագրութեան մէջ շատ շեն երաժշտական գործիքների ու երաժիշտ կատարողների մասին վկայութիւնները, մանրանկարչական պատկերումները։ Այդ բացը մասամբ լրացնում են հնագիտական նիւթերը, որոնք վերաբերում են նաեւ նախաքրիստոնէական շրջանին։ Յայտնի է Սեւանայ լճի ափամերձ Ծովակ գիտից յայտնաբերուած եղչերափողը, իսկ Կարմիր բլուրում՝ բրոնզէ ծնծղաները։

Մեր աշխատանքի նպատակն է ներկայացնել Հայաստանի այն քարակերտ յուշարձանները, որոնք կապուած են երաժշտութեան հետ։ Վկայուած այդ յուշակոթողները, հայ ժողովրդի կեանքում, երաժշտութեան կարեւոր դերի եւ նշանակութեան հաւաստումներն են։

Հայաստանում IV դարից սկսած կերտուել են խաչքարեր, որոնք վաղ շրջանում կոշուել են «Խաչ» կամ «Սուրբ նշան», իսկ արդէն XIX դարից սկսեցին կոշուել խաչարձան կամ խաչքար¹։ Յաւելենք, որ խաչքարերի նշանակութիւնն առանձնակի ընդգծելու համար դրանք, սկսած V դարից, տեղադրում էին պատուանդանի վրայ, բարձրադիր վայրում՝ առաւել հնշեղութիւն հաղորդելու նպատակով։ Այդ մասին մեզ տեղեկութիւններ է հաղորդում պատմիչ Ագաթանգեղոսը, նմանատիպ կոթող յայտնաբերուել է Ջրվէժում²։

Քնարի, շնչական երաժշտական գործիքներով կատարող նուազածուների քանդակներով է զարդարուած էրեբունիում յայտնաբերուած մ.թ.ա. V դ. եղջերագաւաթթը։ Լարային գործիքի պատկերով երաժիշտների տերակոտային արձանիկներ են գրտնուել Արտաշատ քաղաքատեղիում, Դուինում՝ ապակէ սրուակ լարային նուազարանի պատկերով, ոսկրէ սրինգներ՝ Գառնիում եւ Դուինում³։ Շեփոր է վերարտադրուած Գեղարդի XIII դ. վիմափոր եկեղեցու բեմի եւ Մշո Առաքելոց եկեղեցու քանդակագարդ դրան վրայ, Մաշտոցեան Մատենադարանի XII-XVI դդ. մանրանկարներով զարդարուած ձեռագրերի էջերում՝ նուազարանների ձեւի, կառուցուածքի հնարաւորինս ճըշգրիտ արտապատկերումով⁴։

Հայ երաժշտական մշակոյթի ուսումնասիրութեան համար հետաքրքրական է Սիւնիքի Պառաւածոր հնավայրում գտնուող թուագրուած խաչքարը՝ 1221 թ.⁵։ Վերջինիս ձախ կողմի հատուածում պատկերուած է բամբիոը (փանդիո) ձեռքին նուազաց գուսանն Բամբիոի սիմերին հպած նուազարանների ձեւի, կառուցուածքի հնարաւորինս ճըշգրիտ արտապատկերումով⁴։

¹ Աղասեան Ա. Վ., Հայ Արուեստի պատմութիւն, Երեւան, 2009, էջ 125:

² Հայաստանի միջնադարեան կոթողային յուշարձանները. I - III դարերի խաչքարեր, Երեւան, 1984, էջ 37:

³ Յիշիկեան Ա. Մ., Հայկական աղեղնային արուեստը, Երեւան, 2011, էջ 34:

⁴ Քոչարեան Ա. Կ., Հայ ժողովրդական նուազարանները, Երեւան, 2008, էջ 80:

⁵ Կարախանեան Գ. Ճ., Երամիշչ կատարողների հանդակներ XII-XIII դդ. խաչքարերի վրայ, Լրաբեր Հասարակական Գիտութիւնների, թիւ 31, Երեւան, 1976, էջ 99-105:

ներով, շեշտում է երաժշտական գործիքի լարերին դիպչելը: Խաչքարի քանդակը հնարաւորութիւն է տալիս պատկերացում կազմել նաեւ բամբիոի կառուցուածքի եւ ձեւի մասին: Այսպէս՝ գործիքի գուշը թիանման է: Նուագարանի գրիֆը՝ պարանոցը, կարճ է ու լայն: Բացակայում են ձայնաշարերը, գլխիկի մանրամասները, լարի ականջները: Սակայն, գուշի եւ գրիֆի վրայ որոշակի նշանաւում են քառաղի բամբիոի լարերը: Գուշի եւ գրիֆի ստորին մասից կախուած է նուագարանն ուսելու պարանը: Այս խաչքարը որեւէ յայտնի նուագարաց-գուսանի յիշատակին է նուիրուած⁶:

Պակաս ուշագրաւ չէ նոյն տարածաշրջանում գտնուող XII դ. մէկ այլ, մէջտեղից երկու կէս եղած, գեղաքանդակ խաչքար: Խաչքարի միջնամասում խաչի պատկերն է: Հարթաքանդակի աջ կողմում ծալապատիկ նստած կին երաժշտի պատկերն է: Երաժշտի դէմքը պատկերուած է դիմացից, եւ դիմային մասը շրջափակող գլխաշորը իջնում է կրծքին: Ազ ձեռքով բռնել է ջութակ յիշեցնող գործիք, իսկ ձեռքը՝ տարել դէպի ձախ: Ուշագրաւ է խաչքարի արձանագրութիւնը, որն աւանդում է, թէ կանգնեցուել է 1194 թ. Ապլհէճի որդի Վասակի կողմից՝ իր եղբայր Հասանի յիշատակին: Կնոջ պատկերի մօտ յիշատակուած է հանգուցեալ Հասանի մօր՝ Խուշուշի անունը:

Բացի խաչքարերից՝ երաժշտական գործիքների պատկերներ կան նաեւ տապանագրերի վրայ: Հորիզոնական տապանագրարերից տեղեկանում ենք երաժշտական գործիքների մասին, որոնք կիրառուել են տարրեր տօնակատարութիւնների ժամանակ: Հացառատի տապանագրարերից մէկի վրայ պատկերուած է հարսանեկան տեսարան, որտեղ շատ յստակ երեւում են ձիերին հեծնած հարսն ու փեսան, հարսնախպերը, երաժիշտներ եւ գինի բաժանող մարդը: Տեսնում ենք դուդուկ, դափ, քանոն, քամանչա եւ թառ⁷:

Հացառատի տապանագրարերից մէկի (XVI դ.) վրայ չորս անկիւններում հրեշտակները նուագում են գալարափող՝ աւետելով Քրիստոսի գալուստը: Նմանատիպ պատկեր ենք տեսնում նաեւ Սոդքի XVII դ. խաչքարի վրայ⁸:

Տաւուշի մարզի Բերդաւան քաղաքից ոչ հեռու գտնուող Գառզուշի սարի շրջակայքում, 2015 թուականին արուած պեղումների արդիւնքում, յայտնաբերուել են տապանագրարեր, որոնց վրայ պատկերուած են խնջոյքի տեսարաններ՝ երաժիշտների եւ երաժշտական գործիքների պատկերաքանդակներով: Երաժիշտների մէջ պարզ երեւում է նաեւ կին երաժիշտ: Այս ամէնի պատմական վաւերացումն է Նորատու գիւղի IX-XII դդ. մէկ այլ տապանագրար, որի վրայ պատկերուած է նուագարանների «համաստեղութիւն»: Իրար կողքի նստած երաժիշտների ձեռքերին նուագարաններ են՝ քանոն, փանդիռ եւ դափ⁹:

Այսպիսով, քարեգործութեան այս նմոյշները հայկական մշակոյթի անգնահատելի գոհարներից են: Ներկայացուած խաչքարերն ու տապանագրարերը հնարաւորութիւն են ընձեռում ճանաչելու եւ գնահատելու մեր նախնիների թողած ժառանգութիւնը: Հայոց ազգային նուագարաններով պատկերաքանդակներն եւս մէկ անգամ ապացուցում են դրանց պատկանելիութիւնը հայ ժողովրդին եւ նրա գալիք սերունդներին:

ՎԱՐԴԻԹԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Երաժիշտ-տեսարան

⁶ Մելիք-Վրթանեան Կ. Ե., Տօնեան Մ. Ա., Երաժշտական բացատրական բառարան, Երեւան, 1989, էջ 32:

⁷ Քարիստարեան Ս. Գ., Դիւան հայ վիմագրութեան, Երեւան, 1973, էջ 331:

⁸ Պետրոսեան Հ. Լ., Խաչքարերի ծագումը, գործառութիւնը, իմաստաբանութիւնը, Երեւան, 2007, էջ 220:

⁹ Զանփոլատեան Հ. Մ., Քաղաքարեան Ա. Ա., Հայաստանի հնագիտական յուշարձանները, հ 14, Միջնադարեան Հայաստանի առևտրական կապերը VI-XIII դդ., պրակ IV, Երեւան, 1988, աղիաակ 1423: